ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ

INSTITUTE OF GEOLOGICAL SCIENCES SNCO

Մ.Բաղրամյան պ.,24ա
Երևան, 0019, Հայաստանի Հանրապետություն

Հեռ./Tel: (+374 10) 524-426,
Էլ-փոստ/E-mail: igs@sci.am

M.Baghramian Ave., 24a, 0019
Yerevan, Republic of Armenia

N 2452-239

«01» հոկտեմբերի 2026թ.

«Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ –ին
Գործ. Հասցե՝ ՀՀ 0033, ք. Երևան, Երզնկյան փ.,տուն 27
ՀՎՀՀ 20161762

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Բալասյան,

«Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ -ի միջև 2026թ. հուլիսի 02-ին կնքված «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-26/4-1» ծածկագրով պայմանագրի համաձայն «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ-ն պետք է մինչև 01.09.2026թ. մատակարարեր՝

1 հատ դյուրակիր համակարգիչ ՝ LENOVO LOQ 15IRX9,Dell G15 5530 և 1 հատ դյուրակիր համակարգիչ՝ HP ProBook 450G10,Lenovo ThinkBook 15 G4՝ 173000 /Հարյուր յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով , որը մինչ օրս չի մատակարարվել խախտելով պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետը:

Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-ն որոշմանբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ ս/թ հուլիսի 02-ին կնքված N «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-26/1-2» ծածկագրով պայմանագիրը «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից ամբողջությամբ միակողմանի լուծվում է: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կհրապարակվի տեղեկագրում:

Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված ՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրվանից:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում լիազորված մարմին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը (5աշխատանքային օրվա ընթացքում) վճարում է պայմանագրի ապահովման (**95000** ՀՀ դրամ) և որակավորման ապահովման (**142500** ՀՀ դրամ) գումարները ՀՀ ՖՆ գանձապետարանում բացված 900018005422 հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Վճարումը հավաստող փաստաթուղթը սահմանված ժամկետում ներկայացնել պատվիրատուին:

Հարգանքով՝

Տնօրեն Խ.Մելիքսեթյան